

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2000թ. հունվարին, փաստացի գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տարբերակներից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև ընտրանքային դիտարկման (6030 գյուղացիական տնտեսություններ) հաշվարկային, նախնական տվյալներով, կազմել է 9,8 մլրդ. դրամ, որը 1999թ. մակարդակը գերազանցում է 1,9 %-ով (համադրելի գներով):

2000թ. հունվարի 1-ի դրությամբ ըստ մարզայետարանների կողմից ներկայացված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին տվյալների, հանրապետությունում գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների քանակը կազմում է 335086, որոնց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերը կազմում է 460,4 հազ. հեկտար կամ հանրապետության գյուղատնտեսական հողատեսքերի (առանց արոտավայրերի) 66%-ը, վարելահողերը՝ 353,7 հազ. հեկտար կամ հանրապետության ընդամենը վարելահողերի 71,6%-ը:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների քանակը և նրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերը, 2000թ. հունվարի 1-ի դրությամբ

Մարզերի անվանումը	Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ					այդ թվում՝									
						գյուղացիական տնտեսություններ					գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ				
	տնտեսությունների քանակը	գյուղատնտեսական հողատեսքեր, ներառյալ տնամերձը, հեկտար	որից՝			տնտեսությունների քանակը	գյուղատնտեսական հողատեսքեր, ներառյալ տնամերձը, հեկտար	որից՝			տնտեսությունների քանակը	գյուղատնտեսական հողատեսքեր, հեկտար	որից՝		
վարելահող			բազմամյա տրնկարկներ	խոտհարք	վարելահող			բազմամյա տրնկարկներ	խոտհարք	վարելահող			բազմամյա տրնկարկներ	խոտհարք	
Արագածոտն	37139	52227	43840	6107	2280	37139	52227	43840	6107	2280	-	-	-	-	-
Արարատ	52482	31892	23004	8127	761	52482	31892	23004	8127	761	-	-	-	-	-
Արմավիր	50332	41674	29317	11907	450	50331	41665	29312	11903	450	1	9	5	4	-
Գեղարքունիք	46133	68425	51682	48	16695	46133	68425	51682	48	16695	-	-	-	-	-
Լոռի	32549	60680	35740	1034	23906	32542	59492	34692	1034	23766	7	1188	1048	-	140
Կոտայք	37611	53409	38170	4588	10651	37611	53409	38170	4588	10651	-	-	-	-	-
Շիրակ	28153	67002	64157	41	2804	28151	66730	63885	41	2804	2	272	272	-	-
Սյունիք	12707	38679	33697	978	4004	12707	38679	33697	978	4004	-	-	-	-	-
Վայոց Ձոր	11010	16052	11380	2504	2168	11010	16052	11380	2504	2168	-	-	-	-	-
Տավուշ	24492	29972	22541	3552	3879	24492	29972	22541	3552	3879	-	-	-	-	-
ք.Երևան	2478	393	199	194	-	2478	393	199	194	-	-	-	-	-	-
Ընդամենը	335086	460405	353727	39080	67598	335076	458936	352402	39076	67458	10	1469	1325	4	140

Մեկ գյուղացիական տնտեսությանն ընկնող գյուղատնտեսական հողատեսքերի վերաբերյալ տվյալները բերվում են ստորև.

Գյուղացիական մեկ տնտեսությանն ընկնող գյուղատնտեսական հողատեսքերի միջին չափը, մարզերի կտրվածքով, 2000թ. հունվարի 1-ի դրությամբ

(հեկտար)

Մարզեր	1.01.1999թ.		1.01.2000թ.	
	գյուղատնտեսական հողատեսքեր	որից՝ վարելահող	գյուղատնտեսական հողատեսքեր	որից՝ վարելահող
Արագածոտն	1,40	1,18	1,41	1,18
Արարատ	0,59	0,42	0,61	0,44
Արմավիր	0,81	0,57	0,83	0,58
Գեղարքունիք	1,43	1,08	1,48	1,12
Լոռի	1,84	1,06	1,83	1,07
Կոտայք	1,46	1,04	1,42	1,02

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎ ԱԾ

Մարզեր	1.01.1999թ.		1.01.2000թ.	
	գյուղատնտեսական հողատեսքեր	որից վարելահող	գյուղատնտեսական հողատեսքեր	որից վարելահող
Շիրակ	2,12	2,01	2,37	2,27
Սյունիք	2,98	2,61	3,04	2,65
Վայոց Ձոր	1,43	1,00	1,46	1,03
Տավուշ	1,22	0,86	1,22	0,92
Ընդամենը ԳԳ	1,33	1,01	1,37	1,05

Բերված տվյալներից երևում է, որ 1.01.2000թ. դրությամբ մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժի է ընկել 1,37 հեկտար գյուղատնտեսական հողատեսքեր, որից վարելահող՝ 1,05 հեկտար:

Գյուղացիական մեկ տնտեսությանն ընկնող գյուղատնտեսական հողատեսքերի միջին չափը (1.01.2000թ. դրությամբ), մարզերի կտրվածքով, տատանվում է 0,61 հեկտարից (Արարատի մարզ) մինչև 3,04 հեկտարի (Սյունիքի մարզ) սահմաններում:

Անասնապահական մթերքների արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ (հաշվարկային տվյալներով)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ
Արագածոտն	0,5	100,0	1,8	100,0	1,1	68,7
Արարատ	0,3	100,0	1,0	100,0	2,1	95,5
Արմավիր	0,3	100,0	1,0	100,0	2,0	90,9
Գեղարքունիք	0,8	114,3	2,6	104,0	1,9	79,2
Լոռի	0,5	100,0	1,8	100,0	0,9	64,3
Կոտայք	0,4	100,0	1,5	107,1	5,9	210,7
Շիրակ	0,7	116,7	2,0	100,0	1,5	93,7
Սյունիք	0,4	100,0	1,3	100,0	1,0	90,9
Վայոց Ձոր	0,2	100,0	0,7	100,0	0,5	45,5
Տավուշ	0,4	100,0	1,1	100,0	1,1	73,3
ք.երևան	-	-	0,1	100,0	1,3	325,0
Ընդամենը ԳԳ	4,5	104,7	14,9	102,1	19,4	104,9

Գյուղացիական տնտեսությունների ընտրանքային դիտարկման հաշվարկային տվյալներով, 2000թ. հունվարին հանրապետությունում իրացվել է 4,5 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 4,3 հազ. տոննայի դիմաց կամ 104,7%-ը), արտադրվել է 14,9 հազ. տոննա կաթ (14,6 հազ. տոննա կամ 102,1%) և 19,4 մլն. հատ ձու (18,5 մլն. հատ կամ 104,9%):